THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.

ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ։

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 23 — ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 16, 1898 — ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

Մարտ 12.

Ցուցեալ, տխուր և ցաւակոծ սիրտերով, Տ. Ալէքսանդրեան Պարզանը անցեալները գրեց Տատեան Փաշային թէ «կամաց կամաց Աշըգեանը եւ Նուրեանը պիտի փնտռենք», երբ Փաշան իրը Զալատի հաւատարիմ գործակալ, հաղորդեց Ազգի Միահամուռ ձայնով Կիլիկիոյ Տան Կաթողիկոս ընտրուող Սրբազանին թէ «խառնը ժողովը անվաւեր սեպած է իւր ընտրութիւնը»։

Պատրիարքական փոխանորդարանին մէջ հանդիպեցայ անվեհեր եւ Պարթևատիպ Սրբազանին, և կամացուկ մը հարցուցի իրեն թէ՝ Ցարութիւն փաշան պատասխանե՞ց իւր կոծու նամակին։

—Ո՛չ գրաւոր կերպով. միայն իւր կղերական ներկայացուցիչը, Բարթողիմէոս Սրբազանը ղրկած էր խըցիկս կիւրակէ օրը, բայց ես ալ տըկար ըլլալով չը կրցայ տեսնուիլ հեռը։ Այսօր Ս. Պատրիարքը տուաւ վերջին պատասխանը. եթէ չը համակերպիմ՝ կամ կտուց անապատը, և կամ Խարխանեան հայր սուրբին պէս բանտի մը անկիւնը մեղքերս քաւելու պիտի ղրկէ զիս կառավարութիւնը։ Ի՞նչ ընելու է համակրելու է. ի՞նչ ըրաւ երկաթի Պատրիարքը, և զգածեալ շեշտերով յիշեցուց ինձ ծառերու և կացինի առածը. պոչը մեզմէ է. ի՞նչ ընենք...։ Փոխանորդ Հայր սուրբը ընդմիջեց խօսակցութիւնիս, եւ ես մեկնեցայ Պատրիարքարանէն։

* * *

Ալէքսիանեան Սրբազանի ընտրութիւնը բեկանող խառն ժողովին մէջ միայն երկու... Եպիսկոպոսներ անհաւատալի արիութեամբ հակառակած են Պատրիարքին ա՛լ, Փաշաներուն ա՛լ, էֆէնտիներուն ա՛լ։ Այս Եպիսկոպոսներն են. Տ. Գրիգորիս եպ. Յովհաննէսեան —Կրօնական Ժողովի ատենապետ է, և ինք գնայ Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութիւնը կատարեց 3 տարի առաջ— իսկ միւս Եպիսկոպոսը՝ Տ. Վահրամ Եպիսկոպոս Մանկունի։

Էջմիածնի տխրահռչակ Մանկունիէն չէր յուսացուէր այդքան ազնուութիւն. գէթ Տ. Յովհաննէսեան Եպիսկոպոսը տխուր անցեալ մը չունի. բայց իրողութիւնն այն է որ բացի այդ երկու եպիսկոպոսներէն՝ խառն ժողովի միւս փաշա, էֆէնտի և սրբազան անդամները պահանջած են Ալէքսիանեան սրբազանի ընտրութեան բեկանումը։

Երբ Օրմանեան Պատրիարքը ժողովին մէջ դիտել տուած է թէ Ս. Ալէքսիանեանի ընտրութեան Կիլիկիոյ եպիսկոպոսները քուէ չեն տուած և կարգ մը անկանոնութիւններ պատահած են. Ս. Մանկունի Եպ. այնքան բարկացած է որ Օրմանեան Պատրիարքի երեսին պոռացած է —քու Պատրիարք ընտրուիլդ ալ բոլորովին անվաւեր է. դու միայն մէկ քուէ ստացար, այն ալ Սուլթանի քուէն է։

ԱՐԱՄ

ՎԱՏԵՐՈՒ ԱՊԱԳԱՆ

Նիւ Եօրք Հէրալտի Նիւ Հէյվընի թղթակիցը հետեւեալ ճիւաղային պատմութիւնը կ'ընէ նոյն թերթին մէջ. զոր նոյնութեամբ կը թարգմանենք այս տեղ։ —«Ստեփան Եարփուզլեան անունով հայը, իւր չորս տարեկան աղջիկը բռնաբարած ըլլալով՝ 15 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ»։

Այս ահռելի ոճիրի հրէշ գործողը... Հայ պատուելի մըն է, Ստեփան Եարփուզլեան անունով։

Այս տաշուած սրիկայի անցեալ պատմա և դաւաճանութիւններով լեցուն կեանքին ծանօթ ըլլալով՝ կուգամ համառօտակի ծանօթացնել զայն հանրութեան։ Պատ. Ստեփան բաւական ժամանակ Անտիոքի մօտ եղան Օլուք հայաշատ գիւղի Հայ ժողովականներու քարոզչութեան պաշտօնը վարած է, և այդ միջոցին իրեն հետ ծանօթանալու դժբաղդութիւնը ունեցած ենք։

Պատուելին օձի նման սղոսկելով ժողովուրդի մէջ՝ հակառակութեան և ատելութեան թոյները կը սերմանէր չորս կողմը, իւր միակ նպատակն էր ժողովուրդը իրարու դէմ լարուած պահել, և այս խառնակութեան մէջ ապահովուած էին իր՝ և իրեն աջակցող տեղական աղաներու և գիւղի Տէր Աբրահամ քահանայի ու կառավարութեան շահերը։

Յեղափոխական շարժումները դեռ նոր սկսած էին մուտք գործել այդ գիւղին մէջ, և Պատուելին ամենայարմար և շահաւոր միջոց նկատեց իրեն՝ առիթէն օգտուիլ. նա յայտնի գործիք դարձաւ զինքը սիրող կառավարութեան. (պատուելին յաճախ կ'ըսէր «Կառավարութիւնը զիս շատ կը սիրէ»)։

Ստանձնելով դաւաճանի գարշելի դերը՝ նա սկսաւ յեղափոխականներու ամեն մէկ քայլին հետեւիլ, և ամեն օր իւր տեղեկագիրը կը մատուցանէր Կառավարութեան։

Մենք շուտով տեղեկացուցինք իրեն թէ իւր ստորնութիւնները եւ դաւաճանութիւնները շատ սուղի պիտի նստին իւր վրայ։ Պատուելին չը-կրցաւ դիմանալ տիրող յեղափոխական այժերու դէմ, և գիշերով խոյս տուաւ իւր բնակարանէն, և բոյն դըրաւ... իր սիրած կառավարութեան գիրկը. բայց այն տեղ ալ ցոյց տուաւ իւր գոյնը, և ղրկուելով իւր միակ պաշտպանէն ալ՝ նետուեցաւ.. Ամերիկեան Միսիոնարաց օճախը։ Զէյթունի կռուի ժամանակ նա շատ մը վատութիւններ ըրաւ, և շատ մը զեղծումներ՝ Զէյթունցիներու նպաստ բաշխուելու միջոցին։

Կարծես ձանձրացած այլևս երկրին մէջ դաւաճանութիւններ գործելէ, Արտասահման ելաւ. բայց չը-մեկնելէ առաջ, իրը վերջին գործ, գրաւոր կերպով մատնեց քանի մը ընկերներ, որով Հալէպի, Անտիոքի, Աղէքսանդրիայի և Զօք Մարսուանի բանտերը այսօր լեցուած են նոր Հայ բանտարկեալներով։

Մոռնալու չէ նաև գործածած գողզողութիւնները։ Միսիոնարաց կըզմէ կարօտելոց իր ձեռքով բաշխուելու հիմքով անգամ մը 200 ոսկի յանձնուեցաւ իրեն. այս գումարէն 25-30 ոսկիով ցորեն կը գնէ ու զը-գաժնէ մի քանի կարօտելոց, մնացեալը իւր գաբշած կոկորդը կ'անցուն։

Այս գէշգործներու և դաւաճանուհի իշխանները հեղինակը վերջանէ, կը գանէ իւր արժանի պատիժը։ 15 տարուան բանտարկութեան վճիռը մեկ վարձատրութիւնն է այս տեսակ վատհրգի մարդերուն։ Եւ կարելի է բանտի պնտանելի կեանքը շուտով փոխադրէ այս հրէշ-պատուելին՝ սև հոգին գիրկը։ Ահա՛ հոն է վատերու պագան։ ՇԱՒԱՐՇ

Ապրիլ 11, Պոսթոն.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԴՈՐԾ. ԺՈՂՈՎՈՑ

(Շարունակութիւն և վերջ)

Ժողովս անգործ Հայոց ոմանց արհեստ սովրեցուցնել տուած է. քանի մը ծանր հիւանդութիւն ունեցող աղգայիններ Հայրենիք ղրկած է. Կ. Պոլսոյ վերջին կոտորածի ժամանակ իւր ոտք կորսնցուցող Հայ հերոս մը իւր ընտանեօք Ֆիլիպիոպոլիս ղրկած է. 20-25ի չափ անձանց և ընտանեաց նիւթական նպաստ մատուցած է, որոց մանրամասնութիւնները հետզհետէ պիտի հրատարակուին Հայ մամլոյ միջոցաւ։ Սա չափ ասել բաւական է թէ այժմ 300 տոլարի չափ ծախսուած է մինչև յարդ, և ասոր միայն 175 տոլարը հրապարակաւ հանգանակուած գումարէն գործածուելով, մնացածն՝ ուրիշ աղբիւրներէ գոյացած է։ Հանգանակուած դրամի մեծագոյն մասը՝ զայն նուիրող վաճառականաց քով կը պահուի մասնաւոր դիտաւորութեամբ։ Հայ հասարակութիւնը լաւ ըմբռնելու է թէ ընկերութեան մը գործոյն սկզբնաւորութիւնն և հաստատութիւնն ունի այն նոյն դժուարութիւններն, որ ունին սովորական առևտրական գործեր։ Գործոյ մը սկզբնաւորութիւնն և հաստատութիւնը ամիսներ և երբեմն տարիներ կ'առնէ, սակայն երբ մի անգամ անիկայ ճամբու մէջ կը մտնէ, կ'սկսի առատ արդիւնք յառաջ բերել։

Հայոց Բարեգործական Ընկերութիւնը այսօրինակ դժուարութիւններէ ասպիճանաբար անցնելով, այժմ հասած է կէտի մը՝ որ աւելի արդիւնք կը խոստանայ, և ուստի Գործադիր Ժողովս տարակոյս չունի որ Հայ հասարակութեան լուրջ մասը, ո՛չ միայն պիտի քաջալերէ միշտ իր օգնութիւններով Ժողովոյս անշահախնդիր և անձնուէր ծառայութիւնները, այլ և պիտի խրատէ այնպիսիներ, որոնք իւրեանց անիրաւ քննադատութիւններով կը ջանան վնասել զայն։ Բանզի Հայոց լուրջ մասը լաւ գիտէ որ՝ եթէ Գործադիր Ժողովը վնասի, ատոր համար պիտի պիտէ Հայ կարօտեալն և թշուառը։

Գործադիր Ժողովը վստահ է նաև թէ Հայոց լուրջ մասը հաւատք չի պիտի ընծայէ, և հրատարակութեան չի պիտի տայ Ընկերութեանս վերաբերեալ անպատասխանելու, առանց ստուգելու զանոնք պաշտօնական աղբիւրէ։

Գործադիր Ժողովս երբնակի պիտի հրատարակէ իւր շաբաթական նիստերու արարքները Հայ մամլոյ միջոցաւ, ի տեղեկութիւն Հայ հասարակութեան։

Ի դիմաց Հայոց Բարեգործական Ընկ. Դարձ. Ժողովոյ։

Ատենադպիր Ատենապետ
Ա. Մ. ՇԻՇՄԱՆԵԱՆ Յ. Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Ուսթը Ապրիլ 13

(Մեր յատուկ թղթակցէն)

Տեղւոյս օրուայ խնդիրը կարգ մը Հայրենակիցներու Հայրենիք վերադառնալն է. ամեն շաբթու խումբ խումբ թէ՝ տեղացի և թէ՝ շրջակայ քաղաքներէն՝ Հայեր կը մեկնին Հայրենիք. մինչև այսօր մեկնողներու թիւը 60ը կ'անցնի։

Հետաքրքրական է գիտնալ թէ վերադարձողներու մեծ մասը Հայաստանի վերջին խժդժութիւններէ և կոտորածներէն մազապուր փախչողներն են։ Անցեալ օր մէկուն հարցուցի թէ ինչո՞ւ կ'ուզէր վերադառնալ Հայրենիք, ուրիշ հազիւ հազ խոյս տուած էր։ Այս սրտաշարժ պատասխանը պատասխանեց. «այս երկրի գործարաններուն մէջ շարաչար կերպով տանջուելէն և մաշելէն տասնապատիկ լաւ է մէկ անգամ մեռնիլը»։

* * *

Նորակազմ Դերասանական խումբը իւր հասոյթները որբերուն պիտի յատկացնէ։ Շնորհակալ ըլլալով խումբէն, մեզ կը մնայ ամեն զոհողութիւն ընել քաջալերելու խումբը իւր այս նուիրական գործին մէջ։

Ծաղկազարդի առթիւ Լորէնսի Արժ. Տ. Ստեփան Քահանան պատարագեց Ս. Փրկիչ Եկեղեցիին մէջ։ Արժ. Մաշթոց հայրը դըռն-բացի առթիւ քարոզ խօսեցաւ ու յորդորեց ժողովուրդը որ անտարբերութենէ սթափին։

ՀԱՅԿԱՑ-ԹՈՌ

Խմբագիր ՏԻԳՐԻՍԻ

Թիւ 22 ՏԻԳՐԻՍԻ մէջ Հայկայ-Թոռի գրած Ուսթրի գրադարանի, գրապահին և Վարչութեան անդամոց յուսահատութեան մասին անհիմն լուրը հերքելու համար կուգամք յայտարարել թէ Վարչութիւնը և Գրապահը յուսահատած չեն և կը շարունակեն Գրադարանի բացումն ամեն Հինգշաբթի երեկոյ։

Ի Դիմաց Ուսթրի Հայ. Գրդրն. Վարչ.

Ատենադպիր Փոխ Ատենապետ
Յ. ԲՐՈՒՏԵԱՆ Յ. ԳԱՍԱՊԵԱՆ

Ուրախալի է որ Ուսթրի Գրադարանի Վարչութիւնը պաշտօնապէս կը յայտնէ իւր չը յուսահատիլը։ Մեր թղթակից Հայկայ-Թոռին փափաքն ալ այն է որ Վարչութիւնը չը յուսահատելով իւր գործը շարունակէ։

ՏԻԳՐԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ.

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ... ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ	Տ.	Սթ.	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	1	50	Տարեկան	10 Ֆրանք.
Վեցամսեայ		75	Բաժանորդագրին կանխիկ	
Եռամսեայ		40	վճարելի է միշտ։	

Մրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 16 1898.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՆ

Կը լսենք թէ Ամերիկայեաց առջև մեր համբաւն բարձրացընելու, ու Միացեալ Նահանգաց ազգային պատմութեան մէջ մի փառաւոր գլուխ շահելու նպատակաւ շատ մը ազգայիններ, թէ՛ հոս և թէ՛ ի Նիւ Ինկլընտ, կը մտածեն կամաւոր գրուիլ, Ընքըլ Սամի դրօշակին տակ, Սպանիոյ դէմ կռուելու համար։

Արդարև գաղափարը բարձր է և ազնիւ, բայց խնդիրն այնչափ փափուկ է որ կ'արժէ այդ մասին մի քանի խօսք ըսել՝ յօգուտ անոնց որք սովորութիւն ունին՝ այսօրինակ խնդիրներու մէջ անգամ՝ վայրկենական տպաւորութեան տակ՝ որոշում տալ՝ առանց անոր հետեւութիւնն լաւ մը կշռած ըլլալու։

Նախ հարկ է ըսել թէ մենք փափաք չունինք քննադատել այնպիսիներն, որք կը հաւատան թէ իբր Հայ քաղաքացի՝ պարտաւոր են իրենց որդեգրած նոր հայրենիքի պաշտպանութեան համար կռուիլ կամաւոր. և ոչ ալ մեր նպատակն է այս յօդուածով քաջալերել այնպիսիներն որք աստեղազարդ դրօշակին համար արիւն թափել յանձն կ'առնեն ի հարկին, բայց մեր նպատակն է ներկայիս ըզգուշացնել զանոնք, որք լրագրական կրակոտ յօդուածներու կամ ճարտարախօս ատենաբանի մը դիւթիչ խօսքերու ազդեցութեան տակ՝ առանց լուրջ և պաղարիւն մտածութեան՝ այսպիսի յախուռն որոշումներ կ'ընեն, ու կը զղջան քիչ մը վերջ։ Հարկ չէ գուցէ ըսել թէ այսօրինակ սխալ քայլ մը «յետին քան զառաջինն չար» տպաւորութիւն կը ձգէ Միացեալ Նահանգաց ժողովրդին վրայ։

Հոս յարմար տեղն է յիշել թէ վերջի Թուրք-Հելլէն պատերազմը հրատարակուելէ քիչ առաջ, Թուրքոյ դէմ կռուելու համար կամաւորներ ելան մեր մէջէ։ Հոս, Նիւ Եօրքի մէջ շատեր «սրնգով և թմբկով» իրենց անուններն իբր կամաւոր արձանագրել տուին Յունական հիւպատոսարանին մէջ. բայց երբ մեկնելու կոչում եղաւ մեր թեթեւամիտ կամաւորներուն, ցաւ է ըսել թէ ո՛չ ոք գնաց յարգել իր խոստումն, զոր ըրած էր հանդիսաւոր կերպիւ։

Աւելորդ է ըսել թէ այդ դասալիքներու յոռի ընթացքը ո՛ր աստիճանի գէշ տպաւորութիւն ձգեց ժողովրդի վրայ. եւ երբ այսօր Հայ կամաւորներու ձայնը կը լսենք Նորէն, կասկածիլ կ'սկսինք՝ թէ մի գուցէ ասոնք ալ իրենց նախորդներուն պէս թեթեւութեամբ որոշեն, ու երբ կոչում ըլլայ զէնքի տակ մտնել, դասալիք ըլլան վատութեամբ։

Նիւ Եօրք, Նիւ Ճէրզի և Քընէքթիքըթ նահանգներու պահակ գունդերուն վերաբերող Հայոց ոմանց վերջի անպատուաբեր ընթացքը մեր կասկածը երկիւղի կ'սկսի փոխել։ Յաւ ի սիրտ կը լսենք թէ ասոնց գնդապետները, մանաւանդ մին, ծանր ամբաստանութիւններ ըրած են Հայ անուան ու Հայ ազգին դէմ։ Այս գունդերու վերաբերող Հայերէ շատեր՝ քանի մը շաբաթներէ ի վեր նահանգէն դուրս ձգած ելած են՝ պատերազմի երթալու վրտանգէն ազատելու համար։ Քաղաքիս մէկ գնդին վերաբերող 12 հայերէ տասն և մէկը շաբաթներէ իվեր քաղաքէս հեռացած են եղեր. ուրիշ Հայ մը անցեալ օր ինքզինքը վիրաւորելով՝ գնդապետին ներկայացած և հրաման խնդրած է ազատ արձակել, առարկելով թէ վիրաւորուած է պատահմամբ։ Գնդապետն զարմանք կը յայտնէ թէ աներկիւղ Հայը պատերազմի երթալէ առաջ վիրաւորուած էր.՝

Երկիրն ի հարկին պաշտպանելու համար երդում ընող մեր այս քաջարի Հայրենակիցներու դասալիք ըլլալն մէկ կողմէ, Թուրք-Հելլէն պատերազմի ժամանակ Հայ կամաւորներու պախարակելի ընթացքը միւս կողմէ, կ'ստիպեն մարդս կարծել ու վախնալ թէ մեր այս նոր կամաւորներն ալ՝ առանց մտածելու՝ որոշում տուած են կամ տալու վրայ են այնպիսի բանի մը համար՝ զոր անկարող են կատարել։

Կոչում կ'ընենք այսպիսեաց, յանուն Հայութեան պատուոյն, այս ամենափափուկ խնդրոյն մէջ որոշում մը տալէ առաջ՝ կրկին և կրկին խորհիլ ամենայն շրջահայեցութեամբ։ Անհամեմատ օգտակար է մեզ համար բոլորովին անտարբեր մնալ այս մասին, քան խանդավառ խոստանալ, և ապա դասալիք դառնալ։ Այսպիսի տղայական որոշումներ ընելն ազգի անուան ու պատուոյն հետ խաղալ կը նշանակէ։ Ամեն Հայ կ'ուզէ փառաւոր գլուխ մը շահիլ Միացեալ Նահանգաց ազգային պատմութեան մէջ, բայց այդպիսի պատիւ մը շահել աշխատած ժամանակ՝ մենք զմեզ չի խայտառակենք բոլորովին։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը մեզ չի ստիպեր կամաւոր գրուիլ։ Այն որ սիրտ չունի, քաջութիւն չունի և մահէ կ'երկնչի, թո՛ղ զգոյշ ըլլայ իր կարողութենէ վեր խոստումներ ընելէ։

Կտրիճներն միայն կրնան կամաւոր ըլլալ...։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վերջապէս Նախագահ Մէքքինլիի անհամբերութեամբ սպասուած Մէսէֆը երկուշաբթի օրը Քոնկրէսին գնաց։ Նախագահը անմիջական պատերազմ հրատարակելու վրայ չը խօսիր, այլ երկարօրէն կը նկարագրէ տարիներէ ի վեր Քուպայի մէջ տիրող ապստամբութիւններն և թշուառութիւններն, և կը յիշեցնէ Սպանիական կառավարութեան անկարողութիւնը՝ ապահով կառավարութիւն մը կղզիին մէջ հաստատելու համար։

Մէսէֆը կը յիշէ թէ 96ին Նախագահ Քլիվլէնտի կառավարութիւնը ուզեց միջամտել՝ կղզին խաղաղեցնելու համար, բայց Սէնեօր Քանօվասի նախարարութիւնը պարզապէս մերժեց, ըսելով թէ ո՛չ մի օտար կառավարութիւն իրաւունք ունի Սպանիոյ ներքին գործերուն խառնուելու։ Ասոր վրայ Քիւպայի ընդհանուր զօրավարն վէյլը ապստամբութիւնն զսպելու համար 300 հազարի չափ գիւղացիներ և երկրագործներ՝ բռնի զօրութեամբ՝ քաղաքները լեցուց, որով երկիրն անմշակ մնալով վաճառականութիւնն ու առևտուրը դադրեցան, և ժողովուրդը յեսին աստիճան թշուառութեան մէջ ինկաւ. բայց ապստամբները շարունակեցին պատերազմը, մինչև որ Սենեօր Քանօվաս սպաննուեցաւ, ու նոր նախարարութիւնն տարբեր քաղաքականութեան հետևեցաւ։

Իրաց այս վիճակը, կ'ըսէ Նախագահին տեղեկագիրը, կը վնասէ Մ. Նահանգաց վաճառականութեան, և նմանապէս սպառնալիք մ'է երկրի խաղաղութեան. ուստի յանուն մարդասիրութեան իրաւունք ունին Միացեալ Նահանգ միջամտել և Սպանիական խժդժութեան վերջ տալ։

Գալով Քուպայի անկախութիւնն ճանչնալու խնդրոյն՝ Նախագահը մէջ կը բերէ Ճէֆէրսըն Կրանտի կարծիքը թէ "Քիւպան անկախ ճանչնալը չենք կարող արդարացնել, որովհետև միջազգային օրինաց հակառակ է"։ Եւ արդէն միջամտելու և պատերազմը դադրեցնելու համար հարկ չկայ, կ'ըսէ, կղզիին անկախութիւնը ճանչնալ։ Իսկ Մէյն մարտանաւի արտաքին պատճառով մը պայթիլը թէև կարելի չէ վերագրել ո՛և է անձի, սակայն ապացոյց մ'է թէ Սպանիա անկարող է կառավարել ու պաշտպանել կանոնաւորապէս կղզիին թէ՛ օտար և տեղացի բնակիչներն, և թէ՛ իր ջուրերուն մէջ գտնուող օտար ազգաց մարտանաւերը։ Ուրեմն Նախագահը կը վերջացնէ, խնդրելով վեհաժողովէն հրաման և իշխանութիւն Սպանիոյ և Քիւպայի մէջ եղած պատերազմը հիմնովին վերջացնելով՝ կղզիին մէջ պատասխանատու և կարող կառավարութիւն մը հաստատել։

Ասոր վրայ Քոնկրէսը իր արտաքին գործոց մասնախումբերուն յանձնեց խնդիրը։ Հավս օֆ Ռէփրէզէնթէթիվը ստուար մեծամասնութեամբ քուէարկեց ինչ որ Նախագահը կը խնդրէր։ Իսկ Սէնէթը դեռ որոշում մը չը տուաւ։ Բայց կը թուի թէ աւելի խիստ միջոցներու դիմել կը հակի։

ՏԻԳՐԻՍԸ մամուլ ղրկուած ատեն հակաճառութիւնք կը շարունակուէին դեռ։ Վիէննայէն կը լսենք թէ Աւստրիոյ կայսրը խորհուրդ տուած է Սպանիոյ թագուհւոյն անմիջապէս պատերազմ հրատարակել։

ԱԶԴԵՐ

Վաղը Ս. Զատկի առթիւ՝ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Ս. Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ։

Յետ Պատարագի Տ. Յ. Թաւշանճեան պիտի քարոզէ։

Ամեն Հայ կը հրաւիրուի ներկայ գտնուիլ։

Ապրիլ 17, Նիւ Եօրք. Ազգ. Հոգաբարձութիւն

Դպրաց դասը կը ծանուցանէ թէ՝ վերջերս կազմակերպուած է, ու Ս. Զատկի առթիւ ժամերգութիւնը ամենայն ներդաշնակութեամբ պիտի կատարէ։

Վաղը երեկոյ ազատ Լսարանի մէջ պիտի խօսին Տ. Գ. Զիթճեան՝ նիւթ ունենալով «ի՞նչպէս քննադատելու է». և Տ. Տ. Քէլէկեան նիւթ՝ «Հայաստանի Հնութիւնները։»

Լսարանն մէջ ժամը 7ին ազգ. երգեցողութեան դաս պիտի տրուի։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւ Եօրքում հրատարակուող "Հայք" թերթի անգոյն, անսկզբունք Գործակալ-Խմբագիրը վրէժխնդրութեամբ զինուած՝ ջերմախտից յառաջացած մաղձը պատեհ առիթով թափել է իր մահը փութացնող ՏԻԳՐԻՍԻ և Արզումանեանի վերայ. իր ականջին խորթ հնչող ՏԻԳՐԻՍԸ՝ Հայկավար՝ և երիտասարդը՝ նորահնար դերիտասարդ բառերի փոխելով։ Մահուան դատապարտուած յանցաւորը առհասարակ կախաղան դիմելիս կամ հէզ, հանդարտ դէմք կ'առնէ, կամ փրփուրը բերանին հայհոյանք կ'թափի անխտիր դատաւորների և հանդիսականների վրայ։ Հոգեբանական այս երևոյթի բացատրութիւնը իբրև բժիշկ ձեզ եմ թողնում որոշել, իսկ ձեր մի շարք աչքի ընկնող զըրաբանութիւններից յետոյ ասում էք «կրնայ անոնք քննադատել ժողովոյն նստերուն մէջ»։ Այդ շատ լաւ. եւ տնմիջապէս աւելցնում էք, «բայց ոչ թէ երթալ դուրսերը(!) անոնք պարսաւել, հարուածել, դատապարտել(?)» բառերը, և իբր եզրակացութիւն վրճիռ էք տալիս, «ատոր կ'ասեն բամբասանք»։ Երևի ուզում էք ձեր ծաղրածուի դիմակը անցկանցնել ուրիշի գլխին, հա՛, բայց այդ ձեզ չի յաջողիլ. ես ո՛չ Ատենապետի և ո՛չ միւս իմ պաշտօնակիցների հետ անձնական գձուած հաշիւ ունիմ, որից դրդուած ելնեմ նորանց բամբասել կամ պարսաւել, այդ մասին շատ լաւ գիտեն պաշտօնակիցներս և վստահ եմ, ո՛չ ոք կարող է այդ յանցանքով դատապարտել ինձ. հակառակ պարագայում, եթէ հարկը պահանջէ, անձնական նկատումներից բարձր պիտի բռնենք ընդհանուրի շահը։

Ես երբէք դիտաւորութիւն չեմ ունեցել «մինչև երբ սպասել» նամակովս պարսաւել իմ ընկերները. ինչպէս որոմնացանի յատուկ ձեր աւանդական ընաւորութեամբ ճգնում էք ճշմարտութիւնը անտես առնելով՝ երկպառակութեան սակի խնձորը շըպրտել Վարչութեանս մէջ. այս մասին Ընկերութեան շահը պահանջում է գաղտնապահ լինել, սակայն խորհուրդ կուտայի ձեզ նոյն խնդրին վերաբերեալ արձանագրութիւնը կարդալ։

Եւ հուսկ յետոյ, դուք ձեզ իրաւունք էք(!) համարում Սուլթանական միապետութեամբ անդառնալի վճիռ արձակել՝ հրաժարեցնել ժողովուրդի անբռնաբարելի ազատ կամքով ընտրած անդամը, եթէ... այո՛, եթէ համարձակի «Մշակ»ում ձեր քրմական քղանցքին ձեռք դըպցընելու. բայց գիտցած եղիք, ընդհանուր ժողովը միայն կարող է ինձ հրաժարեցնել, եթէ հակառակ Ընկերութեան իրաւունքների շահերի՝ զեղծումներ լինեմ գործած, այն էլ ընդհանուր ժողովի առաջ հաստատելուց յետոյ։

Վերջապէս երջանիկ պիտի համարէր Վարչութիւնը, եթէ հաւատամ թէ գաղտնի դիտաւորութիւնից անկախ էք ձեր ծաղրելի պաշտպանութիւնն նուիրում նրան, որ, սակայն, նրա փոխարէն անպատուութիւն կը համարէի ձեր հոսհսական շողոքորթութիւնը. բայց ո՛չ. Լոյալայի վարդապետութեամբ «նպատակն արդարացնում է միջոցը»։ Արդարութիւնը ո՛չ մի նշանակութիւն ունի ձեզ համար. դուք ձեր շահին նայեցէք, շողոքորթութեամբ յաջողած շահին։

Առ այժմ այս չափ, իսկ եթէ միւս անգամ մեր անուան հետ խաղաք, իմ պատասխանս կ'լինի Առակ. Ի՚Զ. 4 համարը։

Հ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑ

ՖՐԷԶՆՕՅԻ ՀԱՅԵՐԸ

Քիչ անգամներ կը գրուի տեղւոյս Հայ գաղութին վրայօք, թէև պակաս չեն գրուելու արժանի խնդիրներ, քանի որ մենք ալ ունիմք ընկերութիւն մը, վիճաբանական ժողովներ, հանդէսներ, երեկոյթներ ու ներկայացումներ. ունիմք ջերմ ազգասէրներ ու չ'ըսեմք ազգատեացներ, այլ անտարբեր անձինքներ. ունիմք Ազգին նորա որբոց վիճակին վրայ խորհողներ ու օգնողներ, և այդ ու համանման պարագայից մէջ 5 սէնթ չը տալու համար իրենց քսակին բերանը պինդ սեղմող անձինքներ. վերջապէս երբեմն ալ յարանուանական խնդիրներ կը յուզուին՝ մերթ ցաւալի ու մերթ ծիծաղելի կերպարանք մի առնալով, ևն.:

Այս ամենու մասին լռութիւն պահուելուն նկատումներն բացատրել երկար լինելով, գլխաւոր պատճառ մը կրնայ համարուիլ ցարդ յարմարաւոր թերթի մի պակասութիւնն Մ. Նահանգաց մէջ: Հայք հանդէսն՝ մերթ միամսեայ և մերթ երկշաբաթեայ, անբաւական էր այդպիսի թղթակցութեանց համար. այժմ ՏԻՖՐԻՍ միաշաբաթեայ լրագրոյդ բարեյաջող երևումն և մանաւանդ նորա էջերն ժողովրդին առջև բաց ըլլալու յայտարարութիւնն՝ առիթ ու քաջալերութիւն կուտայ Ֆրէզնօյի Հայ գաղութէն թղթակցութիւն մի համառել, յուսալով որ ՏԻՖՐԻՍ պիտի բանայ իր սիւնակները մեր առջև:

Նախ հարևանցի ակնարկ մի ձգելով տեղւոյս «Միութեան» սկզբնաւորութեան մասին, ապա պիտի անցնիմ գրել նորա ներկայ վիճակին և տեղական խնդրոց վրայօք, չը մոռանալով սակայն համառօտ մի ծանօթութիւն՝ մեր Հայ գաղութի թըւոյն ու կազմութեան նկատմամբ:

Մօտաւորապէս 16-17 տարի կը լինի Ֆրէզնօյի Հայ գաղութի հաստատութիւնն, որոյ վիճակագիրն անցեալ տարի հրատարակուեցաւ «Հայք»-ի մէջ. Նոյն թուականէն առաջին 50ի չափ նորեկ Հայեր եւ աւելցան, այնպէս որ այժմ 370-380ի կը հասնի նոցա թիւն (այր, կին, տղայ), որոնք եկած են Տաճկաստանի զանազան քաղաքներէն. այս անձինք կը պատկանին զանազան դասակարգի, սկսեալ Միսիօնարաց քով խոհարարի, սպասաւորի, գործաւորի պաշտօնէն մինչև քարոզչութեան աստիճանն. նոյնպէս երկրագործի, արհեստաւորի դասէն մինչև վաճառականական դասը:

Դիւրին է երևակայել թէ՝ այսպիսի տարբերէ բաղկացեալ ժողովրդի մը մէջ, որոնք բարքով, սովորութեամբ, զգացմամբ, կրթութեամբ ու գաղափարի զարգացումով տարբեր աստիճաններու վրայ կը գտնուին, որչա՛փ դժուարին էր «Միութիւն» հաստատել, և իրօք ի սկզբան եղած ջանքերն ու կազմուելու վրայ եղող ընկերութիւններն մեռան իրենց սաղմին մէջ, միայն թէ այդ փորձերն, գաղափարաց չփումն, սակաւ առ սակաւ գիրար հասկնալն ըստ բաւականի դիւրացուցին երբ 6 տարի առաջ ընկերութիւն մի հաստատողներու ձեռնարկն, որոնք գովելի եռանդեամբ հիմնեցին «Ֆրէզնօյի Հայ Գաղթականաց Միութիւն» անուամբ ընկերութիւնն, նպատակ ունենալով «Մայրենի լեզուն և ազգ. զգացումն վառ պահել»:

Քիչ ժամանակի մէջ անդամոց թիւը շատցաւ. երեկոյթներ ու ներկայացումներ կրկնուեցան, և եռանդեամբ սկսան յառաջ մղել Միութեան համար սեպհական սրահ մի ունենալու գաղափարն: Շատ դիւրին չէր այդ նպատակի իրագործումն, որովհետև «Միութիւնն» իւր դէմ ունէր բաւական թուով հին գլուխ հակառակորդներ և ազգ. խնդրոց համար անտարբեր անձինքներ, որոնք ամեն ջանք ի գործ կը դնէին Միութիւնը քայքայելու և այդ ձեռնարկն խափանելու. բայց անդամոց եռանդն, հաստատամտութիւնն և զոհողութիւնը ի դերև հանեցին այդ խորհուրդները:

«Միութիւնը» գործը միացուց իր խօսքին և անմիջապէս ընդհ. հանգանակութեան ձեռնարկելով մէկ կողմէն զայդ առաջ մղեց և միւս կողմանէ գետինը գնելով շինութեան սկսաւ, ու քիչ ժամանակէն աւարտեց. շէնք ու գետին $ 1500-1600 արժեց, մինչդեռ հանգանակութեան գումարն $ 600ի միայն հասաւ. անդամք կրկին ու կրկին բացին իւրեանց քսակներն, ու յաջողեցան վճարել ծախուց մեծագոյն մասն՝ միայն $ 400 պարտք մնալով, որն՝ ցարդ անվճար կը մնայ:

Միութիւնը հիմնական ու կանոնաւոր կազմակերպութիւն մը ստանալուն հետ մէկտեղ, կանոնագրոյն ինչ ինչ մասերն ևս բարեփոխուելու պէտքն կ'զգար. Նախկին կանոնագիրը խմբագրողներէն ոմանք սկըսան հակառակիլ այդ գաղափարին, որովհետև անփոփոխելի տառոմն մըկըրտած էին զայն, բայց մեծամասնութեան քուէն ջնջեց՝ պատգամի կերպարանք ունեցող այդ անճեթեթ բառն, որով սկսաւ քրթմնջիւնն եւ կուսակցութեանց բաժանումն.: Մինչ այս մինչ այն՝ Սասնոյ ահաւոր կոտորածի լուրն և հետզհետէ մեր սիրելի Հայրենեաց գլխուն տեղացած սոսկալի աղէտներն մոռցնել տուին պահ մը այդ տեղական ու երկրորդական խնդիրներն:

Երկար կը լինի, և ես չեմ ուզեր չարաչար գործածել ՏԻՖՐԻՍի անձուկ էջերն, պատմելով տեղւոյս Հայոց գործունէութիւնը, որոնք Ազգի ազատութեան ու փրկութեան յոյսովն առոգուած սկսան ժողովներ գումարել. Մ. Նահանգաց մէջ Հայկական խնդրոյն համար առաջին Մաս-Միթինկը կազմակերպելու նախաձեռնարկ ըլլալ. հանրագրեր պատրաստել. Անգղ. Թագուհւոյն հեռագրով ողերս մատուցանել Հայ Տիկնանց կողմանէ. զինուորական կրթութեան սկսիլ և վերջապէս հանգանակութիւններ ընել Սասնոյ և Հայաստանի թշուառներուն ի նպաստ են են: Աւելորդ չը լինիր յիշել թէ Ֆրէզնոյի Հայ գաղութն գրեթէ չունեցաւ Հընչակեան, Դաշնակցական, Արմենական են կուսակցութիւններ. Հայրենիքի վերականգման յոյսն էր զիրենք այդ շարժման մէջ դնողն, եւ իրօք՝ ազգասիրական զգացումի տեսակէտով, ամենէ բարձր գագաթնակէտն հասած կարելի էր համարիլ Ֆրէզնոյի Հայ գաղութն՝ այդ պատմական ժամանակամիջոցին. գրեթէ ամեն Հայ մասնակից էր այդ շարժման, ի բաց առեալ մի քանի անձինք, որք մամոնային կ'երկրպագեն ու իրենց եսէն պատ ուրիշ իտեալ ու նպատակ չունին... բայց աւա՛ղ, ասուպի մի երևոյթն ունեցաւ այդ փայլն ու շողը. իրարու յաջորդող մին քան զմիւսն ապշեցուցիչ դէպքերն ու իբաց անհաւատալի ելքն, այնպիսի վըհատութիւն յառաջ բերին, որ սկսաւ հակադարձ շարժումն, Հայրենասիրական եռանդի բարձրացմանն յաջորդեց անկումն, ու կը շարունակուի դեռ, չ'գիտեմ մինչև ե՞րբ եւ մինչեւ ո՞ւր... ա՛լ մեռաւ կ'ըսեն ազգն ալ, Հայրենիքն ալ. յիմարութիւն է անոր համար աշխատիլն, հետևապէս ցնորք է նաև մեր ազգութիւնն այս երկրին մէջ պահելու համար եղած ջանքերն, ու այդ նպատակաւ կազմըւած ընկերութիւններն. եւ ահա կ'սկըրին դարձեալ յերևան գալ հին խնդիրներ. Ազգ. ընկերութիւններն տապալելու ջանքեր ու յարանուանական մգլած վէճեր, որոց մասին պիտի գրեմ ուրիշ առթիւ:

Ապրիլ 5 — Յ. Մ. ՆՇԿԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ժ.

ԻՄ ՍԻՐԱԾՍ

Կապոյտ մէջ հրոտ աչեր աստղագեղ՝
Գոհար շարուած, կարծես, Լուսնի լուսազեղ.
Լուսնի բակը արշալոյսով շողազարդ՝
Գեղուհի մ'էր, շուրջը ցանէր շող ու վարդ:

Նուաղէի. նէ գրկեց վիս զերդ քնար.
Սրտիս լարօք նուագեց, «ես սէր, դու սիրհ'ար»:
Մինչ համբուրով միմեանց տուինք լոյս պսակ՝
Համիտ արնոտ վէրքովլծծածկեց մեր հասակ:

Սև դարձաւ մեր զուարթ կեանքի ծիածան,
Հէք սրտերնէս հառաչ ու վրէ'ժ ժայթքեցան.
«Ա՜խ, գերի ե՞նք»... Թրթռաց բեկեալ լարիս ձայն.
Վերջին ձայնն էր. «սիրեմ արին՝ ձեռըն հրացան»:

Նէ կտակեց անվախ սիրս մ'և հրացան,
Որոյ հուր, ծուխ կաղ րեն ռազմի ծիածան՝
Մեր Նահ'ատակաց դիակներուն ի վերեւ,
մինչև ծագի Ազատութեան պարզ արեւ:

Ի՞նչ կ'արժէ սէրն որ չունի սիրտ քաջ՝ արի.
Լոկ իղձը որ խամրի՝ նման բանջարի.
Ի՞նչ սև սէր է՝ այն բորբոքեալ, բոցոտ սէր,
Որ կը մըքի վասին շողայ երբ սուսեր:

Ես կը սիրեմ ամպը շողին ու շանթին.
Զէյթունցի Հայն՝ Թրքեր փռուած իր չորս դին.
Սիրէ ա՛յն սէր, որ շաւղի մէջ ունի շանթ.
Որ, թէ դգուել, թէ՛ կռուելու ունի խանդ:

Գ. Պ. Ջ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

—Անցեալ Շբ. երեկոյ Պօսթնի Բարեսիրական Ընկերութեան Լսարանին մէջ խօսեցաւ Տքթ. Դամիանոսեան, նիւթ ունենալով «Ի՞նչ է միքրոպը»:

—Կիրակի երեկոյ Պօսթոնի Ազգ. Լսարանի մէջ խօսեցան Տիարք Տամկաճեան և Ս. Մուշեղ. առաջնոյն նիւթըն էր «Բիւպայի խնդիրը», իսկ երկրորդին էր «Օրուան խնդիրը»: Երկու հարիւրի չափ ազգայինք ներկայ էին Լսարանի ժողովոյն:

—Լինի մէջ երկու Հայ կիներ, Տիկին Լ. Սէյրանեան և Տիկին Փ. Մուրատեան կռիւ մ'ըրած էին. անցեալ շաբթու Տիկին Մուրատեանն ձերբակալուած ու 300 տոլար երաշխաւորութեամբ արձակուած էր՝ դատին սպասելով: Կը լսենք թէ Խադ Վարդապետ Լին Գնացած է խնդիրն դատարանէ դուրս լուծելու համար:

—Քաղաքիս Հայ վաճառականներէն Տ. Կիւլապի Կիւլպէնկեան այսօր Կ. Պօլիս կը մեկնի, ուր տեղ պիտի անցունէ ամբողջ ամառը: Կիւլպէնկեան վաճառատան գործերը պիտի վարէ Տ. Յ. Կիւլպէնկեան, որ վերջերս քաղաքս հասաւ Կ. Պոլսէն:

—Լօրէնսի մէջ անցեալ Կիրակի օր Խադ Վարդապետ Ս. Պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ, տեղւոյն Գրադարանի Վարչութեան հրաւիրանօք: Երեկոյին ազգ. Լսարանի մէջ հանգանակութիւն մը կատարուեցաւ տեղւոյն Քահանային ճանապարհածախքն հայթայթելու համար: Հանգանակութեան արդիւնքն եղաւ 40 տոլարի չափ: Յանձնախմբի մը յանձնուեցաւ հանգանակութիւնն շարունակել:

—Անցեալ Երկուշաբթի Տ. Յովսէփ Փուշմանեան ամուսնացաւ Օր. Ֆուլիկ Շալճեանի հետ: Տ. Փուշմանեան որ Շիքակօ կը բնակի, առաջին կարգի նկարիչ մըն է: Վերջին տարիներս Շիքակօյէն կարգ մը նկարիչներ իրենց գլուխ գործոցները ղրկած էին Գաղղիոյ հռչակաւոր նկարիչ Մ. Ժէռօմի, մրցանակ առնալու համար. շատ ուրախալի է որ մեծ վարպետը Տ. Փուշմանեանի գործը ամենէն աքանչելին գտած ու Հայ արուեստագէտին մրցանակ մըղրկած էր:

Տէր և Տիկին Փուշմանեան անցեալ օր Շիքակօ մեկնեցան:

—Նիւ Եօրքի ազգ. զանազան կազմակերպութիւններուն ներկայացուցիչները Չորեքշաբթի երեկոյ ժողով մը ըրին սեփհական սրահ մը վարձելու խնդրոյ մասին համաձայնութեան մը գալու համար: Երկու անձերէ բաղկացեալ յանձնախմբի մը յանձնուեցաւ յարմար սրահ մը գտնել: Տիարք Զիթճեան և Սիրականեան անդամ ընտրուեցան այս յանձնախմբին:

—Բարեգործական Ընկերութեան Ատենապետէն կը տեղեկանանք թէ, Ընկերութեան գործակալ նշանակուած է Տ. Յովհաննէս Սիրականեան:

—Վաղը երեկոյ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովարահին մէջ Ուսումնական Խորհրդի նախաձեռնութեամբ «հաւկիթի» հանդէս մը պիտի տրուի: Փր. Մելգոն և ուրիշներ հրաւիրուած են խօսիլ:

—Հայ երիտասարդ մը անցեալ շաբթու՝ յՍւսթըր, բաղանիքի մէջ լուացուած ժամանակ՝ սխալմամբ չափազանց տաք ջուր գործածած ըլլալով՝ չարաչար վնասուած է, անանկ որ մարմնոյն մորթերը շատ տեղ կեղեւուած են ջուրի տաքութեան տակ: Երկար ատեն տանջուելէ վերջ այժմ սկսած է ապաքինիլ անգգոյշ երիտասարդը:

—Օր. Ազնիւ Բարաքեան թղթակցութեան և թարգմանութեան գրասենեակ մը բացած է Ուսթըրի մէջ:

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. Պօլիս, Ապրիլ 10 —Հայոց Պատրիարքը Անատոլուի վերջի կոտորածներուն ատեն ամբողջովին կամ մասամբ քանդուած 40 եկեղեցիներու ցանկ մը Տաճկական Նպաստամատոյց յանձնախումբին ներկայացուց:

Նորին Ամենապատուութիւնն Հայ որբերու թիւը 40000 կը նշանակէ:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ամբաստանեալը—Ես իմ գործով զբաղած էի լռիկ, երբ այս ոստիկանն զիս ձերբակալեց, Տէր դատաւոր:

Դատաւորը—Ի՞նչ է քու գործդ:

Ամբաստանեալը—Գողութիւն:

ԱԶԴ

Ամէրիքըն Ռըպըն Քօ., Սաութհ Նօրվօք, Քօնն. առաջին կարգի Ռըպըրի գործաւորներ կ'ուզէ: Ընտանիքով եղողներն աւելի նախամեծար կը համարուին: Դիմել առ Կրիւպըր, 496 Պրոդ փողոց, առաջին յարկ:

Ցիշեցէք ըսել թէ ՏԻՖՐԻՍի մէջ կարդացիք այս ծանուցումն:

ՌՈՒՍ ՈՉՆՉԱԿԱՆԱՑ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(Շարունակութիւն)

Լոնտոն, Փետր. 15, 98ին

Գալով մեր հետաւոր նպատակին, մենք ընկերվարական ենք ; և այդ նըկատմամբ նախատեսլէս կը յարինք այն աւանդութիւններուն, որոնք մշակուած են Ռուս յեղափոխականներէն սերունդներէ յաջորդութենէ մը, դըկած Չեռնիշեվսքիէն մինչև Ելիսպով և Հերման Լօբատին —աւանդութիւններ՝ որոնց միշտ հաւատարիմ մնացած են Ռուս յեղափոխականները, վայրկեան մ'իսկ չմոռնալով անոնց ճշմարտութեան վրայ — աւանդութիւններ՝ որոնք մշակուած են բոլոր ուրիշ երկիրներու Ընկերվարական Կուսակցութիւններէն ... : Այս նպատակներուն հասնելու համար կը ընդունինք Ռուսական Կառավարութեան դէմ մաքառելու բոլոր իրական միջոցները, սկսած ամենէն խաղաղական և քաղաքակիրթ միջոցներէն մինչև յեղափոխական ամենաբուռն միջոցները, տեղի և ժամանակի պահանջումներուն համաձայն։ Կրնանք բսել ողբացեալ Ստեբնիաքի բառերով «մենք յեղափոխականներ ենք, ո՛չ միայն ժողովրդին ուղղակի խլրամանը ատրիճանով, այլ եւ զինուորական դաւադրութիւններու ատրիճանով, Պալատին մէջ գիշերային յարձակումներու ատրիճանով, ռումբի և ուժանակի գործածութեան ատրիճանով»։ Թերթին նոյն համարին վերջի մասերուն մէջ խօսելով ռումբերու չինութեան վրայ, կը յաւելուր թէ 1889ին Բարիզի մէջ ձերբակալուող ուսանողները ռումբ չէին պատրաստած, այլ քիմիական մասնաւոր փորձի մը արդիւնքը կ'ըստուգէին, որմէ վերջ Ռուսիա պիտի երթային, ու հոն տեղին վրայ պիտի պատրաստէին ռումբերը, արտասահմանի մէջ կատարուած փորձերու հիման վրայ։ «Բոնթէմփորէրի»ին մէջ կը կարդանք թէ Ս. Գրքի «բաղխեցէ՛ք, ու ձեզի պիտի բացուի» խօսքէն աւելի ճշմարիտ բան մը չկայ։ Այս բանը արդարև կամ աներկբայելի ճշմարտութիւն մ'է և կամ պարզամիտ անհաւատութիւն՝ նայելով այն իմաստին որով կը հասկցուի «բաղխեցէ՛ք» բառը։ Եթէ այդ բառով կը հասկցուի կառավարութիւնը թախանձել մի միայն ամենախոնարհ խնդրագիրներով, ծնրադրութեամբ մատուցուած պաղատանքներով, հաւատացէք ինծ, որ բան մը բացուելիք չունի։ Փորձեցէք ընդհակառակը վերադառնալ Ելիաստովի և Բերովսքիի գործադրած միջոցներուն, ու վստահաբար կրնայ ըսուիլ թէ պիտի բացուի, և շատ շուտով։» Թերթին Բ. համարը հրատարակուած է անցեալ Մայիսին, ու կը պարունակէ յօդուած մը այս վերնագրով «ճի՞շդ է թէ տերրորիզմը միայն գործելու եղանակ մ'է, բայց պէտք չէ անոր վրայ խօսուի»։ Այս յօդուածին մէջ ըսուած է թէ՝ Ռուսիոյ մէջ տերրորական պայքարին վերսկսումը ո՛չ միայն յեղափոխական շարժման ամենահրաժեշտ պահանջումն է, այլ և անոր անխուսափելի պայմանն է, և թէ Նարոդնայա Վօլիա իր փառքը, պատմութեան մէջ իր բռնած դիրքը կը պարտի իր տերրորական պայքարին»։ Նոյն թերթին մէջ՝ ուրիշ տեղ մը ըսուած է․ «Բոնթէմփօրէրի»ին խմբագիրը կը շարունակէ այն ճապաղ կարծիքը պաշտպանել թէ՝ իրերու ներկայ վիճակին գլխաւոր պատճառը պաշտօնեաներու վատթար վարչութիւնն է, և կը ջանայ այս կէտի վըրայ դարձնել Նիքոլա Բ.ի ուշադրութիւնը։ Անուրանալի է թէ վատթար վարչութիւնը այսօրուան Ռուսիոյին ծանտախտներէն մէկն է, բայց անիկայ կը բղխի աղ աւելի մեծ չարիքէ մը —բռնապետութիւն—, եւ չէք կրնար վատթար վարչութիւն վերջացնել, առանց կանխաւ արմատէն խլելու Ռուսական բացարձակ միապետութիւնը, որը կրնայ միայն սահմանափակուիլ բռնի միջոցներով և ուժանակով»։

Երրորդ թիւը, հրատարակուած Սեպտեմբերին, կը պարունակէ հետեւեալ յօդուածը «Պէտք է մեր բոլոր ուժը և կարողութիւնները նուիրենք յեղափոխական պայքարին։ Պէտք է մեր կեանքին առաջին և գլխաւոր պարտականութիւնը ընենք յեղափոխական դատին ծառայութիւնը։ Պէտք է յիշենք Նարօտնայա Վօլիաի գործիչներուն ամբողջ համաստեղութիւնը —Ժելեապօֆներու, Բերովսքիներու, Հալդուրիններու և ասոնց նըմաններու— անսահման անձնուիրութիւնը դէպի գործը և անոնց արտակարգ գործունէութիւնը։ Իցի՛ւ անոնց գործունէութիւնը օրինակ մ'ըլլար մեզի։ Անոնք մեռան այն հաստատ հաւատքով, որ մենք իրենց շաւղին պիտի հետեւինք»։ * * *

(Շարունակելի)

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ

ՐԱՖՖԻԻ

ՍԱՄՈՒԷԼ (Պատմական Վէպ)

Ա. Բ. և Գ. Գիրք

Գինն է $1.75

Իսկ «Դաւիթ-Բէկ» Հատոր Ա. Բ. և Գ. վերջանալով, և «Կայծեր» հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարւոյ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնն շարունակւում է. երկու գրքի միասին բաժանորդագինն է՝ $2½, իսկ լոյս տեսնելուց յետոյ կ'արժենան $3½։ Ցանկացողները թէ' «Սամուէլի» և թէ' Րաֆֆիի միւս երկերի համար, կարող են դիմել հետեւեալ հասցէին՝

Mme. Raffi 270 Uxbridge Road Shepherd's Bush, London W.

Վերջերս ոմանք որոշ գներէն աւելի սկսած են վաճառել այս գրքերը, իբր գրավաճառ իրենց շահը աւելցնելով անոնց վրայ։

Նիւ Եօրքի միակ ներկայացուցիչն է Տ. Մ. Թաշճեան, 251 Ուիլիամ Սթ. որ առանց շահու կը վաճառէ Րաֆֆի բոլոր գրքերը։

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ

ՊՕՂՈՍ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

23 Կրին Փողոց, Ուսթըր Մասս

Ուրիշ տեղ մի' նայիր կօշիկի համար, մեր քով կը գտնես ճաշակիդ յարմար։

Պատիւ ունիմ յայտարարելու արգոյ Ազգայնոց որ Ջատկուայ առթիւ ամեն կարգի կօշիկներ պատրաստած եմ, (արանց, կանանց, տղայոց և աղջկանց) համար։

98ի վերջին մօդային գեղեցկագոյն կօշիկներ։

Նմանը երբէք չ'լսուած գներով։

Յ. ԹԱԳԱԳՃԵԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ։

Միանգամ փորձելն բաւական է մըշտընջենական յաճախորդ ըլլալու։

ՃԻՒԼԻԸԱ ՀԷՅՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ծխախոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու

Թիւ 592 3րդ Աֆիւ

Յիշեցէք ՏԻԳՐԻՍը երբ գնէք

Ա. ԽՕՓՈՒՉԵԱՆ

239 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ



Ամբողջ տարւոյ ամեն տեսակ կօշիկներ (արանց, կանանց, տղայոց և աղջկանց) կը վաճառենք խիստ աժան գներով։

Արանց կօշիկներ	$1·25 էն	5.00
Կանանց «	« 1·25 «	2.50
Տղայոց և Աղջկանց	·50 «	1·50

Նոր պատրաստուած կօշիկներ կըկարենք ձեւաւոր և վայելուչ կերպով, և կը նորոգենք ամեն կարգի կօշիկներ շատ աժան գներով։

ՊԱԿԱՍ ՄԸ ՄԵՐ ՄԷՋ

Կենաց ապահովագրութեան ամենավստահելի Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղեք. Թ. Տարագճեան։

Պայմանք դիւրամատչելի են։

Լիուլի բացատրութիւնք հաճութեամբ կը տրուին փափաքողաց։ Հասցէ՝

77 Ուէսթ 11րդ փողոց, ՆԻՒ ԵՈՐՔ

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Ֆ. ՋԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՔ

ՆԵՐԱԾՈՂ ԹՐՔԱԿԱՆ ԱՊՐԱՆԱՑ

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զորօրինակ. պուլղուր, ծեծած, լոխում, հալվա, խահվէի սէյիրման և ճէզվէ, նէրկիլէ, թէմպէքի, Հայոց ազգային հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս։ Նաև ունինք ամեն տեսակ պահարեղէններ։

Խիստ աժան գիներ։ Փորձեցէք։

ՋԱԼՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՔ

73, Ուաշինկթօն Փողոց.

Հ Ի Ր Զ Օ Լ Ա

ՄԱԶԻ ԴԵՂ

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ։ Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը։

Միանգամ փորձել բաւական է սա դեղին արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտեղէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով։

Կը ծախուի բոլոր դեղագործներուն քով։

Գին 50 Սէնթ միայն։

Կարելի է ստանալ նաև Հայկական դեղարանէն — Ի թիւ 472 3րդ Աֆիւ, Նիւ Եորք։

ԻՊՐԱՀԻՄ ԱՊԼԱՀԱԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մեր այս նոր ճաշարանի մէջ պատրաստ կը գտնուին խիստ մաքուր կերակուրներ, խորտիկներ և անուշեղէններ։

Գինը չափաւոր, մաքրութիւնն նշանակելի։ Մեր շէնքի մէջ ունինք նաև բաղնիք և վարձու կահաւորեալ սենեակներ։

407 Սթէֆէնսըն Սթ. Ուէսթ Հօպօքն



Գարնան համար մեր ստացած տեղական և Եւրոպական նոր ապրանքներն անկարելի է գնի մասին մըրցման ենթարկել ուրիշներու հետ։ Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխաւորեն այնպիսի հագուստներ, որք չեն կրնար գերազանցուիլ։

Փորձ մը բաւական է գքեզ համոզելու համար։

Հայ յաճախորդներէն եղած շահու հարիւրին տասը պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան։

Ուրիշներու երթալէ առաջ շահաւոր է նախ դիմել մեզ։

Կը ծախենք նաև առաջին կարգի հեծելանիւներ, չափաւոր գներով։

Յ. Ս. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ

Թիւ 628 3րդ ԱՎԸՆԻՒ, ՆԻՒ ԵՈՐՔ

Հաստատեալ 1854

ՅԱԿՈԲ Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ

(Ներկայացուցիչ)

ՈՒԻԼԻԸՄ Պ. ՔԷՕՀԼԸՐ ԵՒ ԵՂԲԱՐՔ,

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Գինիի, Օղիի, ոգելից Ըմպելեաց և

Թիւ 202, 204 ԻՍԹ 29րդ Փողոց,

ՆԻՒ ԵՈՐՔ, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ' միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամատչելի են ամէն դասակարգի անձանց.

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Քալիֆորնիաի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, շամբանիա, մասթիքայ, գարեջուր, պրանտի, աբսինթ և այլն, իրենց ամեն տեսակներովը։

Փափաքողաց գներու ցուցակը կ'ղրկուի առանց ո'և է ծախքի։

Ցանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ եւ փութով։ Քաղաքին մէջ ապրանքներն ձրի կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է։

Ըմպելիներ կը վաճառուին թէ' մեծ և թէ' փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով։ (Հօլսէյլ անտ րիթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակսած ու փչացուած չըլլան։

Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կալընով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր։

Դիմել յիշեալ հասցէին կամ

Յ. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,

535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.